Հավելված թիվ 1
ՀՀ Լոռու մարզի
Նոր Խաչակապ համայնքի ավագանու
2021 թվականի մարտի 26-ի
թիվ 21 Ն որոշման

# ԿԱՐԳ
# ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԽԱՉԱԿԱՊ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

Աղբի հեռացումը Նոր Խաչակապ համայնքի վարչական տարածքից պետք է կատարվի համայնքի տարածքում տեղադրված աղբարկղներից, անհատական հասարակական նշանակության և արտադրական կառույցներից:

Աղբի հեռացումը աղբարկղներից պետք է կատարվի մասնագիտացված աղբատար մեքենայով: Աղբը պետք է հեռացվի մինչև աղբարկղների ամբողջությամբ լցվելը:

Աղբարկղերի շրջապատում առկա և հեռացման ընթացքում թափված աղբը պետք է հավաքվի և հեռացվի:

Անհատական բնակելի տներից, հասարակական նշանակության և արտադրական կառույցներից աղբի հեռացումը պետք է կատարվի միայն աղբի հեռացման համար նախատեսված բեռնատար մեքենաներով, փաթեթավորված կամ տարաներում լցված աղբի բարձման միջոցով: Համայնքի տարածքում առկա կենցաղային աղբը պետք է պարտադիր հեռացվի՝ անկախ աղբ առաջացնողի ներկա լինելու հանգամանքից:

Աղբահանությունը Նոր Խաչակապ համայնքում պետք է իրականացվի համաձայն հետևյալ նվազագույն ժամանակացույցի՝

Հունվարից – դեկտեմբեր ամսական 4 անգամ:

| Հ/հ | Աղբամանի գտնվելու վայրը | Քանակը | Տեսակը |
|---|---|---|---|
| 1. | 1 – ին փողոցի սկզբնամաս | 2 | Մետաղյա |
| 2. | 1 – ին փողոցի միջին տարածք | 3 | Մետաղյա |
| 3. | 1 – ին փողոցի վերջնամաս | 1 | Մետաղյա |
| 4. | 2 – րդ փողոցի սկզբնամաս | 1 | Մետաղյա |
| 5. | 2 – րդ փողոցի վերջնամաս | 2 | Մետաղյա |
| 6. | 3 – րդ փողոց միջին տարածք | 1 | Մետաղյա |
| 7. | 3 – րդ փողոցի վերջնամաս | 1 | Մետաղյա |
| 8. | 4- րդ փողոցի միջին տարածք | 1 | Մետաղյա |
| 9. | 4 – րդ փողոցի վերջնամաս | 1 | Մետաղյա |
| 10. | Գերեզմանատան մուտքի մոտ | 1 | Մետաղյա |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ ՄԱՐՏԻՐՈՍ ՏՈՒՌՋՅԱՆ